



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36
հեռ. (0264) 6-15-11

Էլ. ասուցի: info_gavar@aarhus.am

N AA - 007

« 05 » Հունիսի 2015թ

ՀՀ Բնապահպանության նախարար
պարոն Ա. Գրիգորյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան

2013թ-ից «Էմի Ֆրուր» ՍՊԸ Սևանա լճի Շորժայի հատվածում՝ լճի մեջ, պիլոտային ծրագրով, կառուցել է ցանցավանդակային ձկնաբուծարան: Այն մեր իրականության մեջ առաջին փորձնական ծրագիրն է՝ բիզնես պլանը, որի դրական կամ բացասական ազդեցությունը լճի էկոհամակարգի վրա հստակեցված չէր: Հանրային քննարկումները այս հարցի շուրջ չեն տվել հստակ պատասխան կամ մասնագիտական գնահատական: Հանրային լուսմների ընթացքում բիզնես պլանն իրականացնող կազմակերպության ներկայացուցիչները հանրությանը հավաստիացրել են, որ ձկնաբուծարանի շահագործումից հետո՝ յուրաքանչյուր օր, լճում տեղադրված ժամանակակից չափիչ սարքավորումները կտան այդ հարցերի բոլոր պատասխանները, նաև նախագծի առաջին հասարակական լուսմների օրը «ՄԵՎԱՆ ԱՊ» -ի կողմից հավաստիացվեց, որ անձամբ կհետևեն չափումների ընթացքին, և Սևանա լճին վնաս ներկայացնող նույնիսկ փոքր շեղումների դեպքում կդադարեցնեք տվյալ գործունեությունը:

Պիլոտային ծրագրին հատկացված ժամկետն ավարտվել է, սակայն ոչ միայն վերոնշյալ տվյալները չեն հանրայնացվել, այլև նշված ծրագրի իրականացման պայմանագրի ժամկետն է երկարացվել:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, որպես պատասխանատու մարմին՝ խնդրում եմ Գավառի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն ծրագրի իրականացման (ընթացքի և ավարտի) արդյունքում լճի վրա ազդեցության մասնագիտական գնահատականների մասին .

1. Տրամադրել ամբողջական վերլուծություն՝ ծրագրի իրականացման ազդեցությունը լճի էկոհամակարգի վրա, այն է՝ հիդրոկենսաբանական, հիդրոքիմիական, հիդրոմորֆոլոգիական, մոնիտորինգի արդյունքները, եթե այդպիսիք առկա են /ծրագրի իրականացման ընթացքում և ավարտին/,
2. Տրամադրել տեղեկատվություն, թե ինչ հիմքով է պայմանագիրը երկարաձգվել և ինչու է այդ ծրագիրը շարունակում գործունեությունը /տրամադրել երկարաձգված պայմանագրի պատճեն/
3. Ծրագրի իրագործման արդյունքում ինչքան մարնաձուկ է բուծվել, ինչ քանակություն է բաց թողնվել լիճ, որ գետերից, ինչ չափի,

4. Ինչ կեր է օգտագործվել, և դրա ազդեցությունը լճի վրա /տրամադրել հատակային տիղմի լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքները և մասնագիտական եզրակացությունը/:


«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մեր ժաման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով,

Գավառի Օրհուս կենտրոնի համակարգող՝



Լ. Ասոյան